

ՀԱՅ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
Չոբանյան Պ. (ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, Հայաստան)  
pavelchobanyan@gmail.com

Բանալի բառեր՝ պատմագիտություն, կեղծարար, թուրք-ադրբեջանական, տեղեկատվական դաշտ, Հայաստան, սկզբնաղբյուր:

Պետական պաշտոնական մակարդակով ուղղորդվող թուրք-ադրբեջանական պատմագրության կեղծարարությունները սպառնալի մարտահրավերներ են Հայաստանին և հայ ժողովրդին: Դրանք անցողիկ և անիրագրելիության արդյունք չեն, այլ մշակված ռազմավարություն և պետական նպատակասլաց ու հետևողական քաղաքականություն: Թուրք-ադրբեջանական պատմագրության կեղծարարությունները ռազմական հակամարտության դրսևորումներ են տեղեկատվական դաշտում, ընթացող պատերազմի կարևոր բաղադրիչը, ինչի նշանակությունը չի կարելի թերագնահատել:

Հայաստանի պատմության թուրք-ադրբեջանական կեղծարարությունները հերքելու խնդիրը, ըստ այդմ, հայոց պետության խնդիրն է: Հայ գիտնականների կողմից կատարված մեկուսի հակադարձումները, միջազգային արձագանք չստանալով, ի գորու չեն կասեցնել կեղծարարությունները: Դրանք հաճախացել ու շարունակում են ավելի լայն չափեր ընդունել:

Ինչպես և ռազմաքաղաքական ոլորտում, հարկ է ունենալ դաշնակիցներ և համակիրներ՝ հիմնված գիտական ճշմարտության բացահայտման անհրաժեշտության հենքի վրա: Այդ առումով հայագիտությունն ու հայ արևելագիտությունը, մասնավորապես, մեծ անելիքներ ունեն:

Հայաստանում կատարվող պատմագիտական հետազոտությունները պետք է խստորեն համապատասխանեն

միջազգային չափանիշներին ու մեթոդներին, օգտագործելի դառնան միջազգային գիտական մակարդակում:

Գիտական միջազգային համագործակցության միջոցով Հայաստանի պատմության ուսումնասիրությունը կարող է ունենալ որոշակի նվաճումներ, ստանալ այլ կերպարանք և ձեռք բերել միջազգային վարկանիշ:

Հարկ է հրաժարվել գիտական աշխատությունների գնահատման և գիտական նորույթի ներկայացման սովորական դարձած այն ձևից, ինչպիսին է «աշխատությունը նորույթ է հայրենական պատմագրության մեջ» ձևակերպումը, գիտական նորույթը տեղայնացնելու միջոցով այն արժևորելու փորձը:

Հարկ է ընդգծել, որ միջազգային դաշտ մուտք գործելու համար կարևոր, սակայն, գլխավոր պայմանը չէ շարադրման միայն լեզվական խնդիրը:

Թուրք-ադրբեջանական կեղծարարությունները ներառում-ընդգրկում են Հայաստանի պատմության բոլոր ոլորտներն ու ժամանակաշրջանները՝ հնագույն շրջանից մինչև մեր օրերը, և ըստ այդմ, հայ պատմագիտության խնդիրները ևս ավելի քան ընդգրկուն են:

Հայկական սկզբնաղբյուրները թարգմանվում են տարբեր լեզուների և այլ աղբյուրների հետ համադրմամբ օգտագործվում հարակից երկրների ու ժողովուրդների պատմության լուսաբանման համար՝ յուրաքանչյուր դեպքում ստուգելով, վեր հանելով հավաստիության աստիճանը: Նման ուղիով հարկ է ընթանալ նաև Հայաստանի պատմության շարադրման ժամանակ՝ ընդարձակելով ինչպես հայկական, այնպես էլ օտար սկզբնաղբյուրների ընդգրկման ծավալներն ու հարցերի շրջանակները:

Հայագիտությունը ունի խոշոր նվաճումներ, ավանդույթներ, նաև միջազգային գիտական որոշակի վարկանիշ, և հետագա զարգացման

ուղղությամբ անելիքների թվարկումը նպատակ ունի ընդգծելու նրանց  
նորովի շարունակման անհրաժեշտությունը:

THE PRIORITIES OF THE DEVELOPMENT OF ARMENIAN HISTORIOGRAPHY

Chobanyan P. (National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of Oriental  
Studies, Armenia)